ԿԱՐԾԻՔ

Ռուզան Ալբերտի Մկրտչյանի «Սևանի ավազանի կենսահնագիտությունը (միջին և ուշ բրոնզի դարաշրջաններ)» Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ»

Ռուզան Ալբերտի Մկրտչյանի դոկտորական ատենախոսությունը նվիրված է ժամանակակից գիտության ամենահուզող հիմնախնդիրներից մեկին՝ կենսահնագիտությանը: Ինքնին այս աշխատանքը՝ նշանակալից երևույթ է, քանի որ առաջինն է, որտեղ հնագիտական և մարդաբանական սկզբնաղբյուրները դիտարկվում են կենսահնագիտություն գիտակարգի համատեքստում: Աշխատանքում ամփոփվել են ինչպես նախկին հետազոտությունների, այնպես էլ հեղինակի տասնամյակների դաշտային, լաբորատոր և թանգարանային բեղմնավոր գործունեության արդյունքները:

Այս իմաստով աշխատանքը չափազանց արդիական է, քանի որ կենսահնագիտությունն այսօր հնամարդաբանության հենքի վրա ձևավորված մի նոր գիտակարգ է, որը թույլ է տալիս առավել ամբողջական վերլուծել կենսափաստի տեղեկատվական կարողությունները, ինչպես նաև կատարել հին հասարակությունների առօրյա կյանքի և կենսաձևի աառավել հավաստի վերակազմություններ: Մյուս կողմից, թեպետ Սևանի ավազանի Ք.ա. III-II հազ. հնագիտությունը բավականաչափ խորությամբ ուսումնասիրված է վերջին հարյուրամյակի ընթացքում (Ե. Լալայան, Գ. Միքայելյան, Հ. Մնացականյան, Լ. Պետրոսյան, Ա. Փիլիպոսյան և այլն) որպես մշակութային ֆենոմեն, սակայն միջին և ուշ բրոնզեդարյան մշակույթների կրողների մարդաբանական նկարագրի, հնաժողովրդագրական պատկերի, կենսակերպի առանձնահատկությունների վերակազմությունն անհնար է առանց կենսահնագիտության մեթոդների օգտագործման: Այս իմաստով ներկայացված աշխատանքն առավել արդիական է, քանի որ կատարված է ժամանակակից գիտության բոլոր պահանջների համապատասխան: Հեղինակը որդեգրել է միջմասնագիտական մոտեցումներ հնագիտության, գանգաչափության, ոսկրաչափության, ատամնաախտաբանության, մատենագրության, առասպելաբանության տվյալների ներգրավմամբ: Աշխատանքը նորարար է, քանի որ Լճաշենի և Ներքին Գետաշենի միջին և ուշ բրոնզեդարյան համալիրների պեղումներից հայտնաբերված հնամարդաբանական

ներկայացուցչական հավաքածուները, որոնք իրենց չափորոշիչներով համապատասխանում են հնահանրությանը՝ առաջին անգամ ուսումնասիրվել են կենսահնագիտական՝ ատամնախտաբանական մեթոդով: Կարիեսը, աբսցեսը, ատամնաքարը, ատամների մաշվածությունը, էմալային հիպոպլազիան համարվելով ածխաջրատային, կոշտ և փափուկ սննդակարգի, քաղցի և ինֆեկցիոն իրավիճակների ցուցիչներ, համեմատական հետազոտությունների ընթացքում հնարավորություն ընձեռեցին փաստագրել Սևանա լճի ավազանի միջին և ուշ բրոնզի դարերի բնակչության սննդային նախապատվությունները և քաղցի հետևանք հանդիսացող սթրեսային իրավիճակների բացակայությունը: Նույն ծրագրով և մեթոդներով կենսահնագիտական հատկանիշները իմաստավորելու նպատակով, համեմատական կարգով ուսումնասիրվել են Մոսկվայի Պետական Համալսարանի մարդաբանական թանգարանում պահվող հարառուսական տափաստանների յամնայա և սուբնայա մշակույթներին պատկանող դամբանաբլուրներից պեղված գանգաբանական հավաքածուները: Համադրվել են երկու տարբեր իրողություններ հանդիսացող պատմաշխարհագրական և տնտեսամշակութային բովանդակություն ունեցող Սևանի ավազանի համալիր տնտեսաձև վարող միջին և ուշ բրոնզեդարյան բնակչության և համաժամանակյա տափաստանային քոչվոր և կիսաքոչվոր անասնապահների կենսահնագիտական հատկանիշները: Արդյունքում բացահայտվել է ատամնախտաբանական ցուցիչների հանդիպման հաճախականությամբ ծայրահեղորեն տարբերակվող վիճակագրություն: Սկզբունքորեն նորովի են մեկնաբանվել միաժամանակյա ակտով իրականացված խմբային թաղումները: Կոմպոնենտային մեթոդով իրականացված վիճակագրական վերլուծության արդյունքում բացահայտվել է այդ համալիրներում թաղված անհատների առավել սերտ ժառանգաբանական կապը:

Լճաշենի և Ներքին Գետաշենի հնամարդաբանական նյութի սեռատարիքային տվյալների հիման վրա առաջին անգամ վերակազմվել է երկու հնահանրությունների ժողովրդագրական պատկերը՝ որպես մահացության ցուցանիշների առավել հավաստի մոդել:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը պոպուլյացիոն մոտեցումների մեթոդաբանությունն է, սակայն ներկայացնելով բազմընդգրկուն և միջգիտակարգային աշխատանք հեղինակն օգտագործել է պատմական ուսումնասիրություններում կիրառվող այլ մեթոդներ ևս. պատմահամեմատական, համեմատական դիցաբանության, համեմատական լեզվաբանության, վիճակագրության:

Ներկայացված աշխատանքը բաղկացած է ներածությունից, ութ գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից. նկարներ՝ 113 նկար և աղյուսակներ՝ 61 աղյուսակ:

Ներածությունում հեղինակի կողմից ներկայացվում է աշխատանքի արդիականությունը, նորարությունը, գիտագործնական նշանակությունը, մեթոդաբանությունը:

Դոկտորական ատենախոսության առաջին գլխում ներկայացվել են խորհրդային մարդաբանական դպրոցի ներկայացուցիչներ՝ Վ. Բունակի, Վ. Ալեքսեևի, Ռ. Բուբուշյանի, Ա. Մովսեսյանի հնամարդաբանական բնույթի ուսումնասիրությունները, որտեղ Սևանի ավազանի միջին և ուշ բրոնզեդարյան բնակչությունը բնութագրվում է եվրոպոիդ ռասայի սահմաններում, նրան վերագում են հյուսիսային (Վ. Բունակ), կամ տեղական ծագում (Ռ. Բուբուշյան, Ա. Մովսեսյան): Հեղինակի կարծիքով, էթնոժառանգաբանական վերակազմությունների իրականացման դեպքում, հնամարդաբանական նյութը՝ ձևաբանական ուսումնասիրությունների մակարդակում, սահմանափակ ներունակություն է հանդես բերում: Ժառանգաբանական ամենակարևոր բնութագրիչը հնաԴՆԹ-ի ընձեռած հնարավորություններն են:

Երկրորդ գլխում ներակայացված է Սևանի ավազանի դամբարանադաշտերի միջին և ուշ բրոնզեդարյան դամբարանային համալիրների համառոտ նկարագրությունը և սևան-արցախյան ու լճաշեն-մեծամորյան մշակույթների կրողների կենսակերպն ու տնտեսաձևը: Հնագիտական հուշարձանների ընձեռած տվյալները (հզոր պարսպապատ բնակատեղիներ, մետաղագործության և հատկապես զինագործության աննախադեպ աճ, ընդգծված սոցիալական շերտավորում ունեցող հասարակությունների ձևավորում, տարանցիկ առևտրական, տնտեսական և փոխանակային գործարքների ընդլայնում, ռազմաքաղաքական կապերի հաստատում հիմերձավորարևելյան հզոր տերությունների հետ և այլն) մատնանշում են քննարկվող ժամանակահատվածում (մ.թ.ա. XV-XIII դդ.) Սևանի ավազանում ձևավորված մարտունակ տոհմացեղային (գուցեև վաղ պետական) կազմավորումների գոյությունը:

Երրորդ գլխում հեղինակը անդրադարձել է Լճաշենի միջին և ուշ բրոնզեդարյան ներկայացուցչական հավաքածուի գանգաչափական և ոսկրաչափական նկարագրությանը, համաձայն որի նշված ժամանակահատվածի բնակչությունը բնութագրվել է գլխի դոլիխոկեֆալ կառուցվածքով, դեմքի բարձրության մեծ չափերով, քթի խիստ պրոֆիլավորվածությամբ և միջինից բարձր հասակով: Միջին բրոնզեդարյան բնակչության ձևաբանական առաջատարը գանգասակավառակի

չափազանց մեծ ծավալն է, ուշ բրոնզում այն նվազում է դիմային կմախքի բացարձակ չափերի հետ միասին: Միջինից ուշ բրոնզի դարաշրջանին անցման ժամանակաշրջանում նկատվում է նրբակազմեցման գործընթաց:

Չորրորդ գլուխը նվիրված է Ներքին Գետաշենի միջին և ուշբրոնզեդարյան խմբային թաղումներից հայտնաբերված գանգերի ուսումնասիրությանը: Լճաշենի ոչ հեռու գտնվող այս հուշարձանի բնակչությունը միջին և ուշ բրոնզի դարերում բնութագրվում է նույն առանձնահատկություններով՝ դոլիխոկեֆալությամբ, բարձրադիմությամբ, քթի խիստ պրոֆիլավորվածությամբ, գանգասկավառակի մեծ ծավալով, որը դիմային կմախքի բացարձակ չափերի հետ միասին ուշ բրոնզի դարում նվազում է: Նրբակազմեցման գործընթացը նույնպես բնորոշ է Ներքին Գետաշենի ուշբրոնզեդարյան հասարակությանը: Առանձին խմբային թաղումներից հայտնաբերված գանգաբանական ընտրությների կոմպոնենտային վիճակագրական վերլուծությունն ի հայտ բերեց կոնկրետ դամբարաններից հայտնաբերված գանգերի նմանությունը, ինչը թույլ տվեց եզրակացնել, որ նույն դամբարանում միաժամանակյա խմբային ծիսակարգով թաղված անհատներն առավել սերտ ազգակցական-արյունակցական կապ են ունեցել:

Հինգերորդ գլխում իրագործված է Լճաշենի, Ցամաքաբերդի, Ներքին Գետաշենի միջին և ուշբրոնզեդարյան գանգաբանական ընտրությների անհատական տվյալների կանոնիկ դիսկրիմինատային վերլուծությունը: Արդյունքում սևան-արցախյան մշակույթի կրողների արական հատվածն իր համայնքի, գերդաստանի սահմանները չի լքել, իսկ իգական անձնակազմը, հատկապես ուշ բրոնզի շրջափուլից սկսած, այլ համայնքներից բերված անհատներ են, որոնք իրենց ձևաբանությամբ խթանել են նրբակազմեցման գործընթացը: Էկզոգամ ամուսնությունների շնորհիվ Սևանի ավազանի ուշբրոնզեդարյան հասակարաթյունը մի քանի սերնդի ընթացքում ենթարկվել է ձևաբանական փոխակերպումների, որը դրսևորվել է գանգի բացարձակ չափերի նկատելի նվազեցմամբ:

Վեցերորդ գլուխը նվիրված է Սևանի ավազանի ուշ բրոնզ-երկաթեդարյան գանգաբանական հավաքածուների հնաֆենետիկական համեմատական վերլուծականին, որի արդյունքում կարելի է փաստել Սևանի ավազանի ուշ բրոնզեդարյան հին հանրությունների ժառանգաբանական մոտիկությունը: Երկաթի դարում արդեն դրսևորում է որոշակի տարբերակվածություն և բազմազանություն:

Յոթերորդ գլխում, Լճաշենի և Ներքին Գետաշենի անհատական սեռատարիքային տվյալների հիման վրա, կառուցվել են մահացության ցուցանիշներ սույն հանրությունների համար և դրանք մեկնաբանվել են համեմատական համատեքստում: Սևանի ավազանի միջին բրոնզեդարյան բնակչության արական կեսն

առանձնացել է ռեկորդային երկարակեցությամբ, որը ձևավորվել է հասարակության մեջ տարեցների (50-ն անց տարիքի) քանակային գերակշռությամբ: Ուշ բրոնզի դարում մահացության ցուցանիշները նույնպես խոսում են լճաշեն-մեծամորյան մշակույթի կրողների կյանքի միջինից բարձր տևողության մասին: Կանանց մահացության ցուցանիշները իրենց բարձրակետին են հասնում սերնդագործության ակտիվ տարիքում (25-29 տարեկան):

Ութերորդ գլխում ատամնաախտաբանական վեց հատկանիշների (էմալային հիպոպլազիա, կարիես, աբսցես, ատամնաթափություն, ատամների ծամող մակերեսների մաշվածություն, ատամնաքար) տոկոսային ցուցանիշների հիման վրա վերակազմված է Սևանի ավազանի միջին և ուշ բրոնզեդարյան բնակչության ատամնաախտաբանական համայնապատկերը: Դիտարկելով այդ ախտանիշները որպես մեթաբոլիկ սթրեսի հատկանիշներ, կարելի է փաստել, որ Սևանի ավազանի միջին և ուշ բրոնզեդարյան բնակչությունը տառապել է բոլոր հնարավոր ատամնային խեղումներով՝ ատամնամաշվածությամբ, ատամաթափությամբ, ատամնաքարով, կարիեսով: Դրանց պատճառը՝ ինչպես կոշտ, այնպես էլ փափուկ՝ ածխաջրատներով հարուստ, հացահատիկային սննդանին էր: Այս ախտերի շնորհիվ պարադոնտոզը և աբսցեսը չափազանց մեծ տոկոս (36,7%) են կազմում: Ըստ էմալային հիպոպլազիայի չնչին ցուցանիշների (1,3%), այս հասարակությունը բացարձակապես քաղցի չի ենթարկվել, ինչը բացատրվում է համալիր տնտեսաձևի ընձեռած հնարավորություններով: Երկրագործությունն ապահովել է ածխաջրատային, անասնապահությունը՝ պրոտեինային և ճարպային, իսկ ծովամթերքը՝ միներալներով հարուստ սննդակարգ:

Կարելի է արձանագրել, որ հեղինակն իրականացրել է բարդ և մանրազնին աշխատանք: Ներկայացված աշխատանքն առաջինն է իր տեսակի մեջ և անխոս նորարարություն է հանդիսանում: Ատենախոսության մեջ լուծված են այն հիմնական նպատակներն ու խնդիրները, որոնք առաջադրվել են ներածության մեջ: Աշխատանքում տեղ գտած հիմնական դրույթներն ու թեզերը քննարկվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում և ներկայացվել՝ հանրապետական ու արտերկրի 21 հրատարակություններով: Ստացված արդյունքները հավաստի են և կայուն աղբյուրագիտական հենք են հանդիսանում հետագա պատմական, հնամշակութային, հնատնտեսական և հնաանցիոլոգիական վերակազմությունների համար: Այս իմաստով ներկայացված աշխատանքի գիտագործնական նշանակությունը դժվար է գերագնահատել: Հեղինակի կողմից կատարված խորը և հիմնավոր աշխատանքը ունի նաև մեծ ուսուցողական նշանակություն:

Այսքանով հանդերձ կարելի է նշել մի քանի ցանկություններ.

ա. ուսումնասիրման մեթոդները, կենսահնագիտության մեթոդներով հնամարդաբանական նյութի վերակազմությունը ցանկալի է, որ հետագայում ուսումնասիրվեն հնագիտություն և ազգագրություն ուսումնական ծրագրի ուսանողների կողմից համապատասխան դասընթացների շրջանակներում: Այս համատեքստում ցանկալի կլիներ ապագայում տեսնել ոչ միայն նշված աշխատության մենագրային տարբերակը, այլև դրա հիման վրա կազմված ուսումնական ձեռնարկ,

բ. ցանկալի կլիներ, որպեսզի հնարավորության դեպքում նշված մեթոդները կիրառվեին նաևայլ տարածքաշրջանների նկատմամբ: Դա կարող էր թույլ տալ ոչ միայն որոշակիորեն ճշտգրտել ստացված արդյունքները, այլև դիտարկել աշխատանքի ներածականում ներկայացված հիմնախնդիրների համընդհանուր կամ տեղային բնույթը,

գ. ցանկալի կլիներ առավել մանրամասն ներկայացնել գտածոների հնագիտական համատեքստը, առանձին դամբարանների թաղման ծեսը,

դ. որոշ արտահայտություններ կրում են լատինիզմի և ռուսերեն մտածողության ազդեցություն: Տերմինաբանության թարգմանությունը օգտաշահ կլինի հետագա հետազոտությունների համար:

Վերոնշյալ հանգմանքները բնավ չեն ստվերում հեղինակի կատարած հսկայածավալ, խորը գիտական աշխատանքը: Դոկտորական ատենախոսությունը համապատասխանում է գիտական աստիճանաշնորհման անվանացանկի Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությանը և հեղինակը լիովին արժանի է հայցած՝ պատմական գիտությունների դոկտորի կոչման, ինչի համար միջնորդում եմ մասնագիտական հանձնաժողովին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

պ.գ.դ. պրոֆ. Հայկ Ավետիսյան
ԵՊՀ հնագիտության և
ազգագրության ամբիոնի վարիչ

պ. գ. դ. Հ. Գ. Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար Մ. Հովհաննիսյան

16. 06. 2025 թ.